ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեն հայտարարում է մրցույթ՝
քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է ներքին մրցույթ՝ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-1-28.2-Մ4-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-1-28.2-Մ4-1) քաղաքացիական ծառայության պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանվուած գործառույթների, իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, աշխատանքի բնագավառում փորձի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝

http://scs.am/files/havelvats7.pdf

Կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-1-28.2-Մ4-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող ներքին մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 703 սենյակ) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում (ձևը լրացվում է տեղում),
- անձնագիր կամ նույնականացման քարտ (եթե անձը նույնականացման քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել հանրային ծառայության համարանիշ կամ անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի)՝ պատճենները՝ բնօրինակի (ների) հետ միասին,
- աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճենը՝ բնօրինակի հետ միասին.
- արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3X4 չափսի

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի օգոստոսի 5-ից մինչև օգոստոսի 14-ը ներառյալ:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:30-ից մինչև 12:30-ը և 14:00-ից 17:00-ը՝ ներկայացնելով անձնագիրը (նույնականացման քարտը):
Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2020 թվականի սեպտեմբերի 7-ին՝ ժամը 15:00-ին, Կոմիտեում (հասցե՝ ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2020 թվականի սեպտեմբերի 9-ին՝ ժամը 15:00-ին, Կոմիտեում (հասցե՝ ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի **«Հարցարան»** ձևաչափով:
Հիմնական աշխատավարձը 150799 (մեկ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննսունինը) դրամ է:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ գիտության կոմիտե, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22,

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, լինի շփվող, հավասարակշռված, ունենա պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 1, 3-8,
  հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140685
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 1, 3-11
  հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1372
- «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 1, 3-6, 10
  հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138975
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1204-Ն որոշում.
  հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122108
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1146-Ն որոշում.
  հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126002
- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի

և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հունիսի 12-ի N 594-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 20-Լ հրաման.

հղումը՝ http://scs.am/files/GK-kanonadrutyun-20-L-07.05.2020.pdf

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012, էջեր՝ 45-47, 82

հղումը՝ http://fliphtml5.com/fumf/egdx

- Ինֆորմատիկա 8-րդ դասարան: Հանրակրթական ավագ դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի համար: Ս.Ս. Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2013, էջեր՝ 5, 30, 32, 45

հղումը՝ http://fliphtml5.com/fumf/irey/#p=2

- «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր' 70- 129; 223-247

հղումը՝ http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում, հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես՝

- «Խնդրի լուծում»

  հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

- «Հաշվետվությունների մշակում»

  հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ գիտության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 703 սենյակ հեռ. 010-21-01-40-107):